# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1540-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՂԱՐԹ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԿԱՄՈ ՍԱՆԴՐՈՅԻ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ և 24-րդ կետերի, 29-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հանրային ծառայության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 9-րդ հոդվածի 15-րդ մասի՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Մղարթ բնակավայրի վարչական ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Կամո Սանդրոյի Բաբաջանյանին 2023 թվականի դեկտեմբերի 29-ին ազատել պաշտոնից՝ լուծելով նրա հետ 15 մարտի 2023 թվականին կնքված թիվ 129 աշխատանքային պայմանագիրը:
2.Կամո Սանդրոյի Բաբաջանյանի աշխատանքային վերջին օր համարել 2023 թվականի դեկտեմբերի 29-ը:
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Կամո Սանդրոյի Բաբաջանյանի հետ վերջնահաշվարկի կատարումը:

4. Որոշումը ծանոթացնել Կամո Սանդրոյի Բաբաջանյանին :

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2023թ. դեկտեմբերի 29
ք. Ալավերդի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1541-Ա

## «ՔԱՐԱՓՏՐԱՆՍ» ՍՊԸ -Ի ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, 44-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ և 3-րդ կետերով՝

որոշում եմ.

1. Երկարաձգել Ալավերդու համայնքապետարանի և «ՔԱՐԱՓՏՐԱՆՍ» ՍՊԸ-Ի միջև 27.10.2020 թվականին կնքված պայմանագրի ժամկետը, մինչև 2024 թվականի մարտի 31-ը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2023թ. դեկտեմբերի 29
ք. Ալավերդի